ԿՐԹԱԿԱՆ

# ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՏԸ



***Դպրոցների վկայականների տրամադրումը սկսվում է 2022 թվականի հունիսի 20-ից եւ կշարունակվի մինչեւ ընթացիկ ուսումնական տարվա ավարտը:***

Փաստաթուղթ ձեռք բերելու համար շահագրգիռ անձը կարող է դիմել հանրային ծառայությունների զարգացման գործակալության ցանկացած տարածքային գրասենյակ, համայնքային կենտրոն կամ Արդարադատության տան մասնաճյուղ: Եթե շահագրգիռ անձը այս տարի չդիմի վկայական ստանալու համար, ապա հաջորդ տարի նրան կտրամադրվի փաստաթղթի կրկնօրինակը:

**Ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ վկայականն ստանալու համար**

Ամբողջական հանրակրթության վկայական ստանալ ցանկացողները սպասարկման կենտրոններ պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

Նույնականացման քարտ, ծննդյան վկայական՝ եթե պետական փաստաթուղթ / հանրակրթական վկայական տալու մասին դիմումը ներկայացնում է անչափահասի օրինական ներկայացուցիչը:

Պատշաճ կերպով վավերացված լիազորագիր՝ եթե դիմումը ներկայացվում է շահագրգիռ անձի ներկայացուցչի կողմից:

Փաստաթղթի արագացված տրամադրման դեպքում, վաղաժամկետ սպասարկման համար վճարման անդորրագիր:

**Ով կարող է դիմել վկայականն ստանալու համար**

Հանրակրթության պետական փաստաթուղթ ստանալու համար հայտը ներկայացվում է լիազորված ծառայություն:

Ծառայությունների զարգացման գործակալությունը կրթության նախարարության տեղեկատվական համակարգի կողմից ստեղծված էլեկտրոնային տվյալների բազայի հիման վրա թողարկում է հանրակրթությունը հավաստող պետական փաստաթղթի կրկնօրինակը: Վկայականի կրկնօրինակը տրվում է հետեւյալ դեպքերում.

Եթե շահագրգիռ անձը կրթական ծրագրի ավարտի տարում չի ստացել կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ:

Եթե շահագրգիռ անձը նախնական վկայականը ստանալուց հետո փոխել է իր անունը կամ ազգանունը:

Եթե հանրակրթության վկայականը պիտանի չէ.

Հանրակրթությունը հավաստող փաստաթուղթը կորցնելու դեպքում:

**Վկայականների տրամադրման գները**

Սկզբնական հանրակրթության ատեստատի տրամադրումն իրականացվում է անվճար, 10 աշխատանքային օրում: Սակայն տարբեր փաստաթղթերի գների բարձրացման հետ կապված բարեփոխումն անդրադարձավ նաեւ վկայականների վրա:

Արագացված ծառայության վճարը դիմելուց հետո 5 աշխատանքային օրում 45 լարի է:

Արագացված ծառայության վճարը դիմելուց հետո 3 աշխատանքային օրում՝ 65 լարի:

Արագացված սպասարկման վճարը դիմելուց հետո 2 աշխատանքային օրում՝ 85 լարի:

Դիմելու օրը արագացված ծառայության վճարը կազմում է 95 լարի:

# I-IV ԵՎ XI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԿԹԱՐՄԱՑՎԵՆ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանին է ներկայացվել Վրաստանի կառավարության գործունեության մասին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գրավոր զեկույցը, որտեղ այլ հարցերի թվում նշված է, որ 2023 թվականին նախատեսվում է կազմել ինչպես XI դասարանի դասագրքեր, այնպես էլ՝ տարրական՝ I-IV դասարանների թարմացված դասագրքեր:***

Փաստաթղթի համաձայն, մինչեւ X դասարանի աշակերտները նոր ուսումնական տարվանից կսովորեն համապատասխան նոր, ժամանակակից ուսումնական դասագրքերով:

«2021 թվականին վերանայվել եւ հաստատվել են միջնակարգ մակարդակի առարկայական չափորոշիչները: Բացի բովանդակային եւ մեթոդական թարմացումներից, միջնակարգ մակարդակի ազգային ուսումնական պլանում ավելացվել է նաեւ Վրաստանի պատմություն առարկան:

2022-2023 ուսումնական տարվանից տարրական կրթության առաջին դասարանում պարտադիր առարկային կավելանա նաեւ շախմատը՝ աշակերտների վերլուծական, տրամաբանական, քննադատական մտածողությունն ու գործնական խնդիրներ լուծելու հմտությունները զարգացնելու նպատակով», - ասված է փաստաթղթում:

Նշվում է նաեւ, որ տարրական դասարանների առարկաների ուսումնական ծրագրերը վերանայվում են:

Պատրաստվել եւ հաստատվել է «Համակարգչային տեխնոլոգիաներ» առարկայի նորացված չափորոշիչը, որը ներդրվում է տարրական մակարդակում՝ II, III եւ IV դասարաններում:

Դպրոցներում փորձնական իրականացվում է «Բժշկի ժամ», որի ընթացքում դպրոցի որակավորված եւ պատրաստված բժիշկները տարրական դասարանների աշակերտներին տեղեկատվություն են տրամադրում առողջ ապրելակերպի, բռնության նշանների, հավասարության, կիբերհարձակման եւ իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇԵՄԸ

შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

***Որպեսզի ուսուցիչը եւ ուսուցչի հավակնորդը հանձնի առարկայական քննությունը, պետք է հավաքի առավելագույն միավորի 60 տոկոսից ավելին (բացառությամբ՝ մենթորի կարգավիճակ ստանալ ցանկացող ուսուցչի քննությունից):***

Վրաստանի քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնը ներկայացնում է առարկայական քննությունների նվազագույն անցումային միավորը յուրաքանչյուր առարկայից.

Վրաց լեզու եւ գրականություն (VII-XII դասարաններ)՝ 43 եւ ավելի միավոր.

Մաթեմատիկա (VII-XII դասարաններ)՝ 25 եւ ավելի միավոր.

Աշխարհագրություն (VII-XII դասարաններ) 34 եւ ավելի միավոր.

Կենսաբանություն (VII-XII դասարաններ)՝ 37 եւ ավելի միավոր.

Քիմիա (VII-XII դասարաններ) 37 եւ ավելի միավոր.

Ֆիզիկա (VII-XII դասարաններ) 37 եւ ավելի միավոր.

Պատմություն (VII-XII դասարաններ)՝ 34 եւ ավելի մտավոր.

Քաղաքացիական կրթություն (VII-XII դասարաններ)՝ 34 եւ ավելի միավոր.

Օտար լեզուներ (I-XII դասարաններ)՝ 55 եւ ավելի միավոր.

Վրացերեն՝ ոչ վրացալեզու դպրոցների համար (I-XII)՝ 52 եւ ավելի միավոր.

Կերպարվեստ եւ կիրառական արվեստ (I-IX)՝ 37 եւ ավելի միավոր.

Երաժշտություն (I-IX դասարաններ)՝ 43 եւ ավելի միավոր.

Սպորտ (I-XII դասարաններ)՝ 43 եւ ավելի միավոր.

Վրաց լեզու եւ գրականություն՝ 40 եւ ավելի միավոր.

Վրաց լեզու եւ գրականություն, մաթեմատիկա եւ բնական գիտություններ (I-IV դասարաններ)՝ 40 եւ ավելի միավոր.

Վրաց լեզու եւ գրականություն (I-VI դասարաններ)՝ 32 եւ ավելի միավոր.

Բնական գիտություններ (I-VI դասարաններ)՝ 32 եւ ավելի միավոր.

Մաթեմատիկա (I-VI դասարաններ)՝ 32 եւ ավելի միավոր.

Տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներ՝ 43 եւ ավելի միավոր.

Հայոց լեզու եւ գրականություն 43 եւ ավելի միավոր.

Ավագ հատուկ ուսուցչի քննություն՝ 33 եւ ավելի միավոր.

Առաջատար ուսուցչի կարգավիճակ ձեռք բերելու համար՝ 43 եւ ավելի միավոր.

Մենթոր ուսուցչի կարգավիճակ ստանալու համար՝՝ 53 եւ ավելի միավոր (75 տոկոս):

*Խորագիրը պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՂԱՆԴՆԵՐ

# ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ԱՐՍԵՆԸ՝ ԱՐԴԵՆ «ՓՈՔՐ ՎԻՐՏՈՒՈԶ»-Ի ԴԱՓՆԵԿԻՐ

***Ախալքալաքցի շնորհալի 10-ամյա Արսեն Կարապետյանի ստեղծագործական ուղին սկսվեց Ձմեռ պապին հասցեագրված նամակից, որտեղ հայտնել էր դաշնամուր ունենալու իր ցանկության մասին:***

Ամանորի գիշերը, Արսենը տոնածառի տակ փոքր էլեկտրոնային դաշնամուր (սինթեզատոր) «հայտնաբերեց»:

Այդ օրվանից նա սկսեց զբաղվել ինքնուսուցմամբ: Արսենի մայրը, ով մանկուց զբաղվել է երաժշտությամբ, հասկացավ, որ երեխան ունի երաժշտական բացառիկ լսողություն: Այդ մասին մայրը պատմեց հարեւանին՝ կրթությամբ էստրադային երաժիշտ Մարտիրոս Կորկոտյանին, ով ցանկություն հայտնեց պարապել տղայի հետ: Ի զարմանս բոլորի, երեխան կարճ ժամանակում յուրացրեց բոլոր առաջադրանքները եւ հեշտությամբ հիշեց նույնիսկ բարդ ակորդները: Ամենաառաջին եւ ամենասիրած ստեղծագործությունները, որոնք նա սովորեց եւ մինչեւ օրս ուրախությամբ կատարում է «Շալախո» պարն էր եւ սիրված «Միմինո» կինոնկարից «Չիտո-գվրիտո» երգը:

Ավելի ուշ, Արսենը դրսեւորեց երգահանի շնորհ, եւ ուսուցիչը խորհուրդ տվեց շարունակել արհեստավարժի մակարդակով:

Յոթ տարեկանում Արսենն ընդունվեց Ախալքալաքի երաժշտական դպրոց եւ մինչեւ օրս ուսանում է դաշնամուրի դասարանում՝ երաժշտական դպրոցի տնօրեն Սվետլանա Կարոյանի ղեկավարությամբ, մարդ, ով կրթել ու դաստիարակել է բավական մեծ թվով միջազգային մրցույթների դափնեկիրների:



Սկզբում բոլորը կասկածում էին, որ էստրադային երաժշտությամբ եւ երաժշտության նորացմամբ տարված տղան չի ցանկանա զբաղվել դասական երաժշտությամբ: Բարեբախտաբար, իրականությունը ապացուցեց հակառակը: Պատանի հանճարը, որի մասին արդեն խոսում են ե'ւ Ախալքալաքիում, ե'ւ Թբիլիսիում, ե'ւ Երեւանում, ինքն է խնդրում սովորեցնել դասական դաշնամուրային ամենաբարդ ստեղծագործությունները: Այսօրվա դրությամբ, նա մեծ բավականությամբ սովորում եւ կատարում է հանճարեղ կոմպոզիտորներ Բախի, Շոպենի, Ռախմանինովի ստեղծագործությունները:

Վերջերս Արսենին բախտ վիճակվեց ծանոթանալ մեթոդիստ եւ «SOS TALENTS Michel Sogny» հիմնադրամի հիմնադիր Միշել Սոնիի ստեղծագործությունների հետ: Ծանոթությունը տեղի ունեցավ վրաց հանրահայտ դաշնակահարուհի UNESCO խաղաղության դեսպան, Lyra հիմնադրամի հիմնադիր, ճանաչված դաշնակահարուհի Էլիսո Բոլքվաձեի աջակցությամբ:

Վերջինիս հրավերով, Արսենը կմասնակցի երաժշտության եւ արվեստի միջազգային փառատոնին, որը 2022 թվականի հուլիսի վերջին UNESCO հովանու ներքո կանցկացվի Բաթումիում:

Չնայած, որ վերջին երկու տարիները բավական բարդ էին համավարակի եւ կենսական դժվարությունների պատճառով, Արսենը համառորեն շարունակում է պարապմունքները տանը: Նա հասցրել է մասնակցել նաեւ մի շարք մրցումների ու ելույթ ունենալ տարբեր միջոցառումներում:

Արսեն Կարապետյանը 2022 թվականի Վրաստանի «Ապագայի աստղեր» հանրապետական 15-րդ մրցույթի «Փոքր վիրտուոզ» անվանակարգի դափնեկրի կոչման է արժանացել Ռիմսկի-Կորսակովի «Իշամեղվի թռիչքը» ստեղծագործության լավագույն կատարման համար: Արսենը 2020 թվականին, երբ 8 տարեկան էր, Բորժոմիում անցկացված Թենգիզ Ամիրեջիբու (1927-2013) անվան միջազգային 6-րդ մրցույթում հանրահայտ դաշնակահար Վ.Շիուկաշվիլու «Հատուկ պարգեւի» դափնեկիր է:

Արսենն ընդամենը 10 տարեկան է, սովորում է Ախալքալաքի Իլիա Ճավճավաձեի անվան վրացական թիվ 3 հանրային դպրոցում: Նրա սիրած առարկաները մաթեմատիկան ու ինֆորմատիկան են: Ազատ ժամանակ սիրում է շախմատ ու դոմինո խաղալ:

Մեծ բավականությամբ ուսումնասիրում է լեզուներ, կարդում եւ գրում է մի քանի լեզուներով՝ հայերեն, վրացերեն, անգլերեն: Պատրաստվում է սովորել ֆրանսերեն ու իտալերեն:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

## ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՇԽԱՐՀՈՒՄ 100 ՄԻԼԻՈՆ ՓԱԽՍՏԱԿԱՆ...



***Այն, որ մարդիկ զանգվածորեն լքում են ռազմական դիմակայության գոտիները, փաստ է: Հավանաբար, նույնը կատարվում է նաեւ Ուկրաինայում: Հետաքրքիր է, ընդհանուր առմամբ, գոյություն ունի՞, արդյոք, ստույգ վիճակագրություն աշխարհում փախստականների թվի վերաբերյալ:***

***Թ.Մարկոսյան***

***Նինոծմինդայի մունիցիպալիտետ***

Ընթացիկ տարվա մայիսի 23-ին ՄԱԿ-ի Փախստականների գործերի գերագույն կոմիսարի վարչությունը հրապարակեց տվյալներ, ըստ որի, աշխարհում փախստականների եւ ներքին տեղահանված անձանց թիվը, որոնք լքել են իրենց տները` զինված հակամարտությունների, բռնության եւ հետապնդումների պատճառով, առաջին անգամ գերազանցել է 100 միլիոնը:

Գերատեսչությունում պարզաբանել են, որ 2021 թվականի վերջին «աշխարհում հարկադիր տեղահանված մարդկանց թիվն աճել է մինչեւ 90 միլիոն բռնության նոր ալիքների կամ ձգձգվող հակամարտությունների պատճառով այնպիսի երկրներում, ինչպիսիք են Աֆղանստանը, Բուրկինա Ֆասոն, Կոնգոյի Դեմոկրատական Հարապետությունը, Մյանման, Նիգերիան եւ Եթովպիան: Բացի դրանից, 2022 թվականին Ուկրաինայի իրադարձությունները հանգեցրին «8 միլիոն մարդու տեղահանման այդ երկրի ներսում, նաեւ արձանագրվել է ավելի քան 6 միլիոն փախստական»:

Ներքին տեղահանվածների կենտրոնի (IDMC) զեկույցի համաձայն, փախստականների թիվն ամբողջ աշխարհում արդեն գերազանցում է աշխարհի բնակչության մեկ տոկոսը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 40 ՏՈԿՈՍԻ ՄԻԱԳՈՒՄԱՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ 10 ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՊԻՏԱԼԻՑ ՔԻՉ Է




***Գաղտնիք չէ, որ ինչպես բնական, այնպես էլ` մարդկային ջեռքերով ստեղծված բարիքները շատ անհավասարաչափ են բաշխված: Համաշխարհային տնտեսական ճգնաժամերն ու համավարակները է'լ ավելի են մեծացնում այդ անհավասարությունը: Կուզենայի իմանալ կոնկրետ ի՞նչ տվյալներ կան կարողությունների անհավասարաչափ բաշխման մասին:***

***Տ.Կիրակոսյան***

***Ծալկայի մունիցիպալիտետ***

«Oxfam» միջազգային բարեգործական եւ հումանիտար կազմակերպության տվյալներով, աշխարհի տասը ամենահարուստ մարդիկ տիրում են կարողության, որը գերազանցում է մոլորակի ամենաաղքատ բնակչության 40 տոկոսի` 3,1 միլիարդ մարդու խնայողությունները:

Զեկույցում նշված է, որ աշխարհում կա ընդամենը 2 688 միլիարդատեր` 573-ով ավելի, քան դեռ երկու տարի առաջ, որոնց ընդհանուր կարողությունը հավասար է 12,7 տրիլիոն դոլարի: «Oxfam»-ում նշում են, որ 20 խոշորագույն դոլարային միլիարդատերերի հարստությունը գերազանցում է Սահարայից հարավ ամբողջ Աֆրիկայի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ):

Փորձագետներն ընդգծում են, որ կորոնավիրուսի համավարակի սկզբից, ըստ վիճակագրության, յուրաքանչյուր 30 ժամը մեկ աշխարհում հայտնվում է նոր միլիարդատեր: Ըստ որում, վերջին երկու տարում միլիարդատերերի միագումար կարողությունն աճել է ավելի, քան բոլոր 23 նախընթաց տարիներին միասին: Ներկայումս նրանց միագումար կարողությունը հավասարվում է համաշխարհային ՀՆԱ-ի 13,9 տոկոսին, ինչը եռապատիկ ավելի է, քան 2000 թվականին: Տնտեսագետներն ուշադրություն են հրավիրում այն բանին, որ վերջին ժամանակներս առանձնապես մեծ շահույթ են ստացել, մասնավորապես, այն ընկերությունների սեփականատերերը, որոնք զբաղված են էներգետիկայի եւ պարենի ոլորտում` 453 միլիարդ դոլար երկու տարում:

ՔԱՅԼ` ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

# ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



***Վրաստանի հանրային դպրոցներում հնչեց «Վերջին զանգը»: Երեկվա դպրոցականդ թեւակոխում ես կյանքի հաջորդ` շատ պատասխանատու փուլ, որի հաջող անցումը մեծապես կպայմանավորի քո կյանքի դրվածքը: Հավանաբար, շուտով կգա թերեւս ամենակարեւոր որոշում կայացնելու պահը: Չէ՞ որ մասնագիտության եւ համալսարանի ընտրությունը շատ կարեւոր նշանակություն ունի: Եթե դեռեւս չես կողմնորոշվել այդ հարցում, ներկայացնում ենք մի քանի խորհուրդ:***

***1. Առանց խուճապի***

Դու հավանաբար շատ կլսես, որ մասնագիտության ընտրությունը ճակատագրական որոշում է, որը մեկ անգամ ես ընդունում, եւ պետք է դրան լրջորեն վերաբերվել: Անկասկած, սա կարեւոր որոշում է եւ հարկավոր է մտածել դրա մասին: Եթե դեռեւս դժվար է կողմնորոշվել, կարիք չկա խուճապի մատնվել: Ամեն դեպքում, այս հարցում չես կարող կոպիտ սխալ թույլ տալ, եթե օրինակ` չես սիրում երկրաչափություն, ուրեմն, հաստատ չես ընտրի մաթեմատիկայի ֆակուլտետը: Իսկ ընդհանրապես, դիպլոմում նշված մասնագիտությունը ոչ բոլոր գործատուներին է հետաքրքրում: Կարեւորը լավ ինքնադրսեւորվելն ու լավագույն որակը ցույց տալն է:

***2. Դպրոցական առարկաների բազմազանությունը***

Հաճախ են հնչում բողոքներ դպրոցական առարկաների եւ յուրաքանչյուր առարկայից հանձնարարվող առաջադրանքների բազմազանության մասին: Ընտրություն կատարելիս` օգտագործիր այս հանգամանքը: Ուշադրություն դարձրու այն առարկաների վրա, որոնք քեզ դուր են գալիս եւ զարգացրու գիտելիքներդ առաջին հերթին այդ ուղղությամբ:

***3. Հոբբի կամ սիրած զբաղմունքի նշանակությունը***

Հաշվի առ քո նախասիրությունները: Եթե շատ ես սիրում պարել, ուրեմն, ընտրիր պարուսույցի մասնագիտությունը: Այն ոլորտը, որտեղ միշտ ուզում ես կատարելագործվել, քեզ հաճույք կպատճառի: Եթե նույնիսկ քո ապագա մասնագիտությունը ոչ մի ընդհանուր բան չունի քո սիրած զբաղմունքի հետ, մի' վհատվիր եւ մի' հրաժարվիր դրանից: Հոբբին օգնում է զարգանալ եւ հաղթահարել աշխատանքի հետ կապված դժվարությունները: Երբեմն էլ մարդիկ այնքան իմաստուն են գտնվում, որ իրենց հոբբին դարձնում են բիզնես եւ համատեղում այն աշխատանքի հետ:

***4. Խուսափիր ճնշումներին ենթարկվելուց***

Ապագա մասնագիտությունը պետք է բացառապես քո ընտրությունը լինի, եւ ոչ ոք չի կարող դա անել քո փոխարեն` ո'չ ծնողները, ո'չ ընկերները, ո'չ էլ ուսուցիչները: Այս իրավիճակում հարկավոր է ցույց տալ համառություն եւ վճռականություն. լսիր բոլոր կարծիքները, համաձայնիր կամ ոչ` արտահայտելով եւ փաստարկելով քո մոտեցումը:

***5.Դժվար ընտրություն***

Եթե արդեն պատկերացնում ես քեզ որոշ ոլորտներում, բայց ոչ մի կերպ չես կարողանում վերջնականորեն կողմնորոշվել, ապա կարող ես մի թղթի վրա նշել դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները: Սա կօգնի մտքերը դասավորել եւ արագ որոշում կայացնել:

Մտերիմներիդ խնդրիր պատասխանել հետեւյալ հարցերին.

* Քո կարծիքով, ինձ մոտ ի՞նչն է լավ ստացվում:

* Ո՞ր որակներն են օգնում ինձ առաջ գնալ:

* Ի՞նչ կուզես, որ դառնամ 5 տարի անց:

* Ե՞րբ ես հպարտանում ինձնով:

Որոշ պատասխաններ կարող են բացահայտումներ լինել, եւ չի բացառվում, որ օգնեն այլ կերպ գնահատել սեփական անձը:

*Գոյություն ունեն հատուկ հոգեբանական թեստեր, որոնք օգնում են կողմնորոշվել մասնագիտության հարցում:*

*Ստեղծվել են հատուկ համակարգչային ծրագրեր, որոնք եւս օգտակար են մասնագիտական կողմնորոշման համար. դու նշում ես այն առարկաները, որոնցից պետք է քննություն հանձնես, իսկ ծրագիրը որոշում է, թե այդ քննությունների արդյունքներով որտեղ կարող ես ընդունվել ու ինչ հնարավոր մասնագիտություններ ձեռք կբերես:*

*Մասնագիտություն ընտրելիս` կարեւոր է հետեւել սրտի թելադրանքին: Եթե չսիրես աշխատանքդ, երբեք բավարարվածության զգացում չես ունենա: Լսիր քո ներքին ձայնին եւ մտածիր` իրականում ինչով ես ուզում զբաղվել: Ինչը կխթանի քո մեջ աճելու, զարգանալու, նոր բարձունքների ձգտելու ցանկությունը: Ի՞նչն է քեզ հետաքրքրում կամ ի՞նչն է հեշտ տրվում: Այս հարցերի անկեղծ պատասխանները կփարատեն ավելորդ կասկածներն ու անհանգստությունը:*

## ԱՖՈՐԻԶՄՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լավ է կույր աչքը, քան կույր միտքը:

***ԵՂԻՇԵ***

Կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է:

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***

Վատն է այն աշակերտը, որը ուսուցչին չի գերազանցել:

***ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ***

Սովորելը մարդուն կրթված չի դարձնում: Կան նրանք, ովքեր ունեն իմացություն, եւ նրանք, ովքեր ունեն հասկացողություն: Առաջինի համար անհրաժեշտ է հիշողություն, երկրորդի համար` փիլիսոփայություն:

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄԱ***

Կրթվածությունն այն է, ինչ մնում է, երբ մոռանում են այն, ինչ սովորել են:

***ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ***

Այն առարկաները, որոնք սովորեցնում են երեխաներին, պետք է համապատասխանեն նրանց տարիքին, այլապես վտանգ է առաջանում, որ նրանցում կզարգանան իմաստակելը, սեթեւեթանքը, սնափառությունը:

***ԷՄԱՆՈՒԻԼ ԿԱՆՏ***



Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է:

***ՋՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ***

Նա, ով բացում է դպրոցի դուռը, փակում է բանտինը:

***ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ***

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգագործել աշխարհը փոխելու համար:

***ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ***

Հարկավոր են խելացի, կրթված մարդիկ: Լավագույն կյանքին մարդկության մոտենալուն համեմատ, այդ մարդկանց թիվը կմեծանա, մինչեւ որ նրանք կազմեն մեծամասնություն:

***ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ***

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

***ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԵԳ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՐԵՎՈՐՎԵԾ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ



*Հունիսի 18-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով տեղակալ Քերըն Դոնֆրիդի հետ:*

Հանդիպմանը վարչապետը կարեւորեց հայ-ամերիկյան հարաբերությունների շարունակական զարգացումն ու ընդլայնումը, բարձր գնահատեց ԱՄՆ օժանդակությունը Հայաստանի կառավարության ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ առաջընման գործում:

Քերըն Դոնֆրիդի խոսքով, ԱՄՆ վարչակազմը եւս կարեւորում է Հայաստանի հետ տարբեր ուղղություններով փոխգործակցության ընդլայնումն ու ամրապնդումը:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՂ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻՆ



*Հունիսի 20-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Մինսկում մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նեղ կազմով նիստին, որին մասնակցեցին նաեւ Բելառուսի, Ռուսաստանի, Ղազախստանի եւ Ղրղզստանի կառավարությունների ղեկավարները:*

Եվրասիական տնտեսական միության երկրների վարչապետերը քննարկեցին ներքին շուկայի ամրապնդմանը, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանը, մաքսային սակագների կարգավորումներին վերաբերող հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ թվային օրակարգի շրջանակում համագործակցությանը:

Իսկ հունիսի 21-ին անցկացվեց Եվրասիական միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով նիստը:

## ՄԵԿՆԱՐԿԵԾ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

*Հունիսի 22-ին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, Երեւանում անցկացվեց «Հայաստանում աշխատուժի զարգացման» ծրագրի առաջին ազգային համաժողովը:*

«Հայաստանում աշխատուժի զարգացման» ծրագիրն իրականացվում է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի եւ գործընկերների՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Հայ օգնության ֆոնդի եւ ՍԻՎԻՏՏԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ կողմից: Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի հոկտեմբերին՝ նպատակ ունենալով ընդլայնել երիտասարդների ու կանանց աշխատանքային հմտությունների զարգացման հնարավորությունները: Այն համապատասխանեցվում է աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաեւ խթանում բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, զբոսաշրջության ու հյուրընկալության ոլորտներում վերջիններիս աշխատանքի հնարավորություններին:

Ծրագիրն հնարավորություն ունի 5 տարիների ընթացքում ՀՀ մարզերի 15-29 տարեկան 10 000 երիտասարդի տրամադրել աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող աշխատանքային հմտություններ, եւ նրանցից 7 000-ի համար ապահովել բարելավված աշխատանքային հնարավորություններ:

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆ» ԾՐԱԳԻՐԸ

*Փորձի փոխանակում, հմտությունների զարգացում, կապերի հաստատում, նոր շունչ՝ Սփյուռքի համայնքային կյանքին. այս եւ այլ ուղղություններով մի շարք հնարավորություններ է ընձեռում Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի կողմից իրականացվող «Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիրը: Այն արդեն կազմակերպվում է երկրորդ անգամ:*

Առաջին անգամ ծրագրին մասնակցել է 20 երիտասարդ՝ աշխարհի 16 երկրներից: Նրանք հնարավորություն են ունեցել երկու շաբաթ լինել Հայաստանում, Արցախում, մասնակցել դասընթացների, աշխատաժողովների, ունենալ հանդիպումներ, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ՝ կապված քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթամշակութային եւ այլ հարցերի հետ:

Վերադառնալուց հետո նրանք պարտավորվում են իրենց համայնքներում հանդես գալ ծրագրերով ու նախաձեռնություններով՝ ներդնելով ծրագրի շրջանակում Հայաստանում ձեռք բերված փորձն ու գիտելիքները:

Ծրագրի շրջանակում մասնակիցները մեկ տարվա ընթացքում իրականացրել են համայնքային եւ հայրենադարձության 121 հանդիպում, սոցցանցային 538 եւ 30 մեդիա հրապարակում, մեկ կրթամշակութային կենտրոնի բացում, մեկ տեսաֆիլմի ստեղծում, դրամական աջակցության 2 նախաձեռնություն, ցանցային 6 աշխատանք, հայկական շահերի պաշտպանությանն ուղղված 10 ձեռնարկ, համայնքային 2 ուսումնասիրություն եւ Սփյուռքի երիտասարդական քաղաքականության փաստաթղթի շուրջ աշխատանք:

Այս տարվա ծրագրի հայտադիմումների ընդունման մեկնարկը տրվել է մայիսի 16-ին, ավարտվելու է հուլիսի 1-ին: Արդեն կան հայտեր ՌԴ-ից, եվրոպական երկրներից, Վրաստանից, ԱՄՆ-ից: Ծրագիրն իրականացվելու է սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 8-ը: Մասնակցելու է կրկին 20 հոգի:

## ԱՆՑԿԱՑՎԵԾ «ՈՒԴՈՒԼԻ» ՏՈԼՄԱՅԻ 11-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ

### ՊԱՏՐԱՍՏՎԵՑ ՌԵԿՈՐԴԻ ՀԱՎԱԿՆՈՂ 193 ՄԵՏՐԱՆՈՑ ՏՈԼՄԱ

*Հունիսի 19-ին «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում անցկացվեց «Ուդուլի» տոլմայի համահայկական 11-րդ փառատոնը:*

*Փառատոնը ներածական խոսքով բացեց ծնունդով Մառնեուլի շրջանի Խոխմել գյուղից, «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» կազմակերպության նախագահ Սեդրակ Մամուլյանը: Փառատոնմրցույթին այս տարի մասնակցեց 27 թիմ:*



Սեդրակ Մամուլյան

«Ուդուլի» տոլմայի համահայկական 11-րդ փառատոնի բացարձակ հաղթող անվանակարգում մրցանակակիր դարձավ «Գառնի տուն» ռեստորանը: Այն տաղավարում ներկայացրել էր 7 տեսակի տոլմա՝ հորթի մսով, սնկով, պասուց տոլմա, Մշո տոլմա, սարի տոլմա, ամառային, դեղձով ու չրով տոլմա: Հաղթող թիմը ուտեստները մատուցել էր հին հայկական արքունական մոտիվներով:

Թիմերը պայքարում էին «Լավագույն համ», «Լավագույն տեսք», «Լավագույն գաղափար» անվանակարգերում հաղթելու համար: Մասնակիցները ներկայացրին ձկով, կարտոֆիլով, կանեփով տոլմաներ եւ սիրված ուտեստի այլ տեսակներ: Նրանք պատրաստել էին տոլմայի մոտ 70 տեսակ: Այս տարվա փառատոնին մասնակից որոշ թիմեր պատրաստել ու մատուցման էին ներկայացրել քաղցրավենիք, գաթա, փախլավա եւ այլն:

«Էլեգանտ» ռեստորանային հյուրանոցային համալիրը պատրաստել էր 193 մետրանոց տոլմա: Թիմն ստացավ շնորհակալագիր ու հավաստագիր, գրանցվեց «Դյուցազնագրքում» եւ հնարավոր է, որ գրանցվի նաեւ «Գինեսի» ռեկորդների գրքում:

2011 թվականից իրականացվող համահայկական փառատոնը նպատակ ունի նաեւ զարգացնել զբոսաշրջության ոլորտը եւ օտարերկրացիներին ծանոթացնել հայկական մշակույթի առանձնահատկություններին:

### ԵՐԵՎԱՆՆ ԱՌԱՋԱՏԱՐ Է ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹՎՈՒՄ

***«Global Startup Ecosystem Index-2022»-ի միջազգային վարկանիշում Երեւանը կովկասյան քաղաքների շրջանում առաջատար է: «StartupBlink»-ն ամեն տարի հրապարակում է աշխարհի ամենաընդգրկուն «Global Startup Ecosystem Index» զեկույցը, որը դասակարգում է 1000 քաղաքների եւ 100 երկրների ստարտափ էկոհամակարգերը: Նպատակը որակյալ զարգացումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացնելն է:***

***«Երեւանը կովկասյան տարածաշրջանի ամենաբարձր վարկանիշ ունեցող քաղաքն է: 2022 թվականին քաղաքն ընդգրկվել է աշխարհի լավագույն 250 քաղաքների վարկանիշային ցանկում: Երեւանը մեծ թռիչք է գրանցել՝ բարելավվելով 38 կետով եւ զբաղեցրել է ցանկի 244-րդ տեղը: Այս աճը քաղաքը բարձրացրեց Արեւելյան Եվրոպայի սանդղակով, որտեղ այն այժմ զբաղեցնում է 19-րդ տեղը, 2021 թվականի 29-ի փոխարեն»,- ասված է զեկույցում:***

### ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹԻՎ

***2022 թվականի մայիս ամսվա ընթացքում Հայաստանում արձանագրվել է 673 հազար 224 վճարովի աշխատատեղ, ինչը բոլոր ժամանակների պատմական ռեկորդն է:***

***Ինչպես հայտարարել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաշվառվում են միայն այն աշխատատեղերը, որոնց համար վճարվել է աշխատավարձ եւ պահվել եկամտահարկ:***

***-2022 թվականի մայիսին, 2021 թվականի համեմատ, մեր աշխատատեղերն ավելացել են 38 հազար 273-ով կամ 6 տոկոսով, 2019 թվականի մայիսի համեմատ, ավելի են 72 հազար 359-ով, կամ 12 տոկոսով, 2018 թվականի մայիսի նկատմամբ՝ 125 հազար 235 աշխատատեղով: Այսինքն՝ 2018 թվականից ի վեր Հայաստանում ի հայտ է եկել ավելի քան 125 հազար աշխատատեղ,- ասաց նա:***

### 120 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Հայաստանի կառավարությունը հավանության արժանացրել Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ զարգացմանն ուղղված համագործակցության դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման նախագիծին:***

***ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) ընդհանուր նախատեսված ներդրումը նպատակներին հասնելու համար կազմում է 120 000 000 ԱՄՆ դոլար, որը կհատկացվի մասնաբաժիններով: ԱՄՆ ՄԶԳ-ը նախատեսում է բաշխել իր ընդհանուր ներդրումը հետեւյալ կերպ. 68 565 000 ԱՄՆ դոլար՝ ժողովրդավարության խթանման եւ 51 435 000 ԱՄՆ դոլար՝ տնտեսական անվտանգության բարելավման համար:***

### ԱՊԱՍՏԱՆԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ՝ 250 ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ

***Ընթացիկ տարում Հայաստանից ապաստան եւ փախստականի կարգավիճակ է հայցել ավելի քան 250 օտարերկրացի, մեծ մասը՝ Ուկրաինայից: Միգրացիոն ծառայության տվյալներով, ապաստանի հայցեր են ստացվել աշխարհի 13 երկրներից՝ Ուկրաինա, Իրան, Իրաք, Կուբա, Լիբանան, Սիրիա եւ այլն:***

***Վերջին տասը տարիներին Հայաստանը փախստականի կարգավիճակ է տրամադրել ավելի քան 1500 ապաստան հայցողների: Վերջին 5 տարիներին ներկայացվում է տարեկան միջինը 220 ապաստանի հայց:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒՆԻՍ



*26.06.2022 Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց*

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները գտնելու գյուտին: Տոնի առիթով եկեղեցին հաստատել է շաբաթական պահք՝ երկուշաբթիից շաբաթ:

*28.06.2022 Սուրբ Կոստանդիանոս կայսեր եւ նրա մոր՝ Հեղինեի հիշատակության օր*

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

### ԵՐԿՐՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՂ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻՑ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ Է ԱՆՑԵԼ ՄԻԱՅՆ ԿԵՍԸ...

### ԽԱԽՏՈՂՆԵՐԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ



*Վրաստանի Ավտոտեխզննման մարմինների ասոցիացիայի նախագահ Վաժա Իորդանիշվիլու խոսքով, Վրաստանում ակտիվ գրանցում է անցել կես միլիոն ավտոմեքենա, որոնցից միայն կեսն է անցնում տեխզննում: Հավանական է նաեւ, որ մեքենաներն ունենան բավականաչափ շատ անսարքություններ, բայց այսպես կոչված խելացի տեսախցիկները դրանք չկարողանան հայտնաբերել:*

Վրաստանում նախատեսվում է բարձրացնել տեխզննում չանցած ավտոմեքենաների տուգանքի չափը: Այժմ օրինագիծը մշակման փուլում է:

Պարբերական տեխզննումն անցնելու պարտավորությունը խախտելու, այսինքն՝ տեխզննում չանցած ավտոմեքենան վարելու դեպքում, ֆիզիկական անձը կտուգանվի 50, իսկ իրավաբանական անձը՝ 200 լարիով:

Տուգանվելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե կրկին խախտում գրանցվի (այսինքն՝ մեքենան տեխզննում չանցնի), ֆիզիկական անձի դեպքում տուգանքը կեռապատկվի (150 լարի), իսկ իրավաբանական անձի դեպքում կհասնի 300 լարիի:

Երկրորդ անգամ տուգանվելուց հետո 30 օր անց, կրկին նույն խախտումը կիարուցի տուգանք ֆիզիկական անձի դեպքում՝ 300, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ 500 լարիի չափով:

Եթե քաղաքացին տուգանվի երրորդ անգամ, իսկ տեխզննում անցնելու պարտավորությունը կրկին չկատարվի, ապա 300 լարիի տուգանքը կեռապատկվի (իրավաբանական անձի դեպքում՝ 500 լարի):

Նախատեսվում է օրինագիծն ընդգրկել խորհրդարանի գարնանային նստաշրջանում, քննարկումը կսկսվի աշնանը:

***ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ***

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

### ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ

*Հունիսի 14-ին «Երեւան, իմ սեր» հիմնադրամում տեղի ունեցավ «Ալ.Սպենդիարյան» երկլեզու պատկերագրքի շնորհանդեսը:*

Գրքի տպագրման աշխատանքը հայ մեծ երգահանի 150-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների ամփոփումն էր, որը կազմակերպվել էր Երեւանի Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարանի եւ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից: Վրաստանից միջոցառմանը մասնակցում էր Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը: Օրվա առիթով, Վիրահայոց թեմի կողմից Ալ.Սպենդիարյանի թանգարանին փոխանցվեց «Ալմաստ» գեղանկարը, որի հեղինակը թբիլիսցի նկարիչ Արտյոմ Ալաբույանցն է:

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

### ՍԿՍՎԵՑ «ՀԱՎԼԱԲԱՐԻ» ՀՐԱՊԱՐԱԿԻ ԵՎ «ՀԱՎԼԱԲԱՐ» ՄԵՏՐՈԿԱՅԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

*«Հավլաբարի» հրապարակն ու «Հավլաբարի» մետրոյի կայարանի հարակից տարածքը կբարեկարգվեն ու կվերանորոգվեն:*



Թբիլիսիի քաղաքապետարանի տարածած տեղեկության մեջ նշված է՝ նախագծի համաձայն, կվերականգնվեն «Հավլաբարի» կայարանի հարակից կանաչ պատը, ինչպես նաեւ «Հավլաբարի» ու «Երեւանի» հրապարակները:

Հունիսի 21-ին Հավլաբարում իրականացվող աշխատանքներին ծանոթացել են Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն եւ փոխքաղաքապետ Անդրիա Բասիլաիան:

- Քեթեւան Դեդոփալու պողոտայում ընթացող վերականգնմանը զուգահեռ կբարեկարգվեն «Հավլաբարի» հրապարակն ու «Հավլաբարի» մետրոյի կայարանի հարակից տարածքը: Կլինի հետիոտնային տարածք եւ բաժանարար գծեր, որոնք ծածկվելու են բնական քարերով: Հրապարակում կտեղադրվեն նաեւ ժամանակակից տիպի լուսադիոդային արտաքին լույսեր, աթոռներ, կծածկվի խոտածածկույթով, կմոնտաժվի ոռոգման համակարգը: Տարածքն ամբողջությամբ հարմարեցված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց պահանջներին,- ասաց Կախա Կալաձեն ու հավելեց, որ շատ շուտով կսկսվեն մետրոյի կայարանի վերանորոգման եւ վերականգնման աշխատանքները: Կալաձեն նախատեսում է, որ բոլոր աշխատանքները կավարտվեն մինչեւ նոյեմբեր:

***«ՎՐԱՍՏԱՆ»***



Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանն ու Սակրեբուլոն, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը վշտակցում են Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետի ներկայացուցիչ Բոլնիս-Խաչեն գյուղում Արմեն Հարությունյանին, սիրելի մոր՝

***Ռոզա Հարությունի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ իրենց ցավակցությունն են բերում հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

## Խ Ա Չ Բ Ա Ռ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1. Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված արձակագիր, թարգմանիչ, դրամատուրգ: 5.Երուսաղեմի մոտ գտնվող լեռ, որտեղ խաչել են Քրիստոսին: 9.Ասիայի հարավ-արեւմուտքում ապրող ժողովուրդ: 10.Հետադաս կապ: 11.Երիտասարդ երգիչ ... Բավեյան: 13.Մաս, կտոր: 14.Թանկարժեք մետաղ: 17.Ներկա օրը: 18.Գրական ստեղծագործության տեսակ: 19.Հին զենք: 20.Հողակտոր, հողամաս: 21.Ծառի ճյուղը: 23.Ժխտական նախածանց: 24.Գեր, չաղ, բտեցրած: 27.Էստոնացի փոփ երգչուհի, վաստակավոր արտիստուհի ... Վեսկի: 28.Ուղտերի շարանը: 30.Կրակ, ալավ, բոց: 32.Չորրորդ դարի ասորի եկեղեցական գործիչ, պատմիչ ... Գլակ: 34.Հացաբույսերի խուրձ: 36.Վրաց գրող Ն.Դումբաձեի վեպը «Սպիտակ ...ներ»: 38.Դոն Կիխոտի ընկերը Սանչո ...: 39.«Ասավ, հասավ գառանը, ..., թռավ անտառը» («Գայլն ու գառը» առակից): 42.Երաժշտական ստեղծագործություն: 43.Հենրիկ Շաթիրյանի վեպը: 45.Անտառի ծառազուրկ մասը: 47.Նախագասության գլխավոր անդամ: 49.Թթու, խեղդող համ: 50.Ուկրաինայի նախկին ներքին գործերի հայ նախարարը: 52.Ուրու, տեսիլք: 53.Դանդաղաշարժ կենդանի: 54.Հայկական ծխախոտ ... բերդ: 57.Շնչում ենք եւ արտաշնչում: 58.Վրացական ֆիլմ Միեր Մկրտչյանի մասնակցությամբ: 59.Համ տվող միջոց: 60.Ֆրանսիացի գրող, փիլիսոփա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Սայաթ-Նովային նվիրված Թբիլիսիում ամեն տարի նշվող տոն: 3.Ամուլ, անպտուղ: 4.Երաժշտական գործիք: 5.Հայ մեծ բարերար, մեկենաս ... Գյուլբենկյան: 6.Մխիթարյան միաբանության կղզին՝ Սուրբ ...: 7.Ստորադասական շաղկապ: 8.... առ Աստված: 9.Կոմիտասի ստեղծագործություններից: 12.Լարային քառյակ: 15.Ջրի սուր պահանջ: 16.Անֆիլտր ծխախոտ: 20.Հայ առաջին ֆիդային: 22.Անհավատ, հավատը կորցրած: 24.Չինական արջ: 25.Թռչնի տեսակ: 26.Մաքուր, անարատ, տանը պատրաստված: 28.Մաշտոցյան այբուբենի վերջին զինվորը: 29.Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործություններից: 31.Վաթսուն վայրկյան: 32.Լեռնաշղթա Հայաստանում: 35.Կենա..., հոնո..., բավա...: 37.Եկեղեցում երգվող ստեղծագործություն: 40.Եգիպտական աստված: 41.Ամերիկայի բնիկները: 43.Մութ, ականակիտ: 44.Վրաց գրող, հասարակական գործիչ ... Ծերեթելի: 46.Վրաց խորհրդային բանաստեղծ, թարգմանիչ ... Տաբիձե: 48.Կոչում հին Վրաստանում, իշխան: 51.Մրահ..., կոմերտ..., Վարդատ...: 55.Երկրի անձնավորումը Հունաստանում: 56.Յոթերորդ ձայնանիշը: 57....ակ, ականջ...:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Արձան: 8.Տոլմա: 10.Միհր: 11.Տեղ: 13.Բանակ: 14.Ալաբինա: 16.Ական: 17.Կոխ: 18.Շիվան: 20.Ռատի: 21.Քիթ: 22.Շփոթ: 26.Ագահ: 28.Սալաթ: 31.Նալ: 32.Թագ: 34.Նայա: 35.Աղաջին: 36.Բրաս: 38.Դափ: 41.Հսկա: 43.Ֆաներա: 45.Բախտ: 48.Պար: 49.Կազմ: 52.Սիրտ: 53.Մագ: 54.Ռին: 55.Քանի: 56.Դուր: 57.Սանր: 58.Ջրի: 59.Սիգ: 60.Կոթ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Արժանիք: 2.Օնիկ: 3.Մտրակ: 4.Ալվան: 5.Վատիկան: 7.Ամանաթ: 9.Աղախին: 12.Ենոտ: 15.Լադոգա: 19.Վիլլա: 23.Փանոս: 24.Թալակ: 25.Վքար: 27.Գաջ: 29.Աննա: 30.Այբ: 32.Թարս: 33.Գոյա: 37.Ազապ: 39.Փոխինձ: 40.Ֆերարի: 41.Հակ: 42.Կազինո: 44.Նամուս: 46.Ասա: 47.Տրիր: 50.Առակ: 51.Մորթ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445